ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/136 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

21.11.2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Միհրան Ղամբարյան՝ Արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական

Անդամներ՝
Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Արաքսյա Ղազարյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ.
Հանձնաժողովի քարտուղար՝ Նարինե Փարսադանյան՝-ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. **Ընդունել ի գիտություն.**

Համակարգչային, էլեկտրական տեխնիկայի և կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/136» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ին Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնումների էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) 13.10.2022թ. շնորհվել է պայմանագիր, սակայն մասնակիցը սահմանված ժամկետում չի հաստատվել և Համակարգով չի կցել պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և կիրառվում է Օրենքի 6-րդ հոդվածի «բ» պարբերությունը:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Մերժել «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (Կարգ) 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ ընթացակարգը 1-ին չափաբաժնով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Ղամբարյան**

_____ **Գ. Բոյաջյան**

անդամներ՝ _____ **Ա. Ղազարյան**

քարտուղար՝ _____ **Ն. Փարսադանյան**